Изв. НАН и ГИУ Армении (сер. ТН), т. LII, № 3, 1999, с. 275-277.

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ԹՈՐԳՈՄ ԹՈՐՈՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՕՀՍԵՆ ՄՈՒՐԱԴԻ ՍԱՊՈՆՋՅԱՆ

(ԾՆՆԴՅԱՆ 90 - ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Լրացավ Հայաստանում ճարտարագիտական կադրերի պատրաստման երկու երախտավորների 90 տարին. գիտության վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ԹՈՐԳՈՄ ԹՈՐՈՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, որը 40 տարուց ավելի ղեկավարել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեսական մեխանիկայի ամբիոնը եւ գիտության վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՅԱԱ թղթակից-անդամ ՕՀՍԵՆ ՄՈՒՐԱԴԻ ՍԱՊՈՆՋՅԱՆԻ, որը շուրջ 48 տարի ղեկավարել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի նյութերի դիմադրության ամբիոնը: Նրանց միավորել են ոչ միայն հոբելյանական տարեթիվը եւ կյանքի ու ստեղծագործական ուղիները, այլեւ դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկայի բնագավառում կատարած ու միջազգային ճանաչման արժանացած աշխատանքները:

Նրանց պատրաստած գիտական կադրերը հետագայում դարձել են Հայաստանում մեխանիկայի զանազան բնագավառների հիմնարար հետազոտությունների հեղինակներ եւ իրենց ներդրումն ունեն նոր գիտական կադրերի պատրաստման հայրենանվեր գործում: 1980-ական թվականներին պրոֆեսորներ Թ. Խաչատրյանի եւ Օ. Սապոնջյանի կողմից ղեկավարվող ամբիոններից յուրաքանչյուրում արդեն աշխատում էին մի քանի պրոֆեսորներ եւ 20-ից ավելի դոցենտներ:

Օ. Սապոնջյանը եւ Թ. Խաչատրյանը, լինելով հիմնարար մեխանիկայի, մասնավորապես, մաթեմատիկական առաձգականության տեսության բնագավառում ճանաչված գիտնականներ, մեծ աշխատանք էին կատարում Հայաստանում ճարտարագիտական մեխանիկայի զարգացման համար: 1980-ական թվականներին նրանք փորձում էին Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում բացել «Մեքենաների դինամիկա եւ ամրություն» մասնագիտությունը, որը Երեւանի պետական համալսարանում տարիներ ի վեր դասավանդվող դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկայի ճարտարագիտական տարբերակն է: Ցավոք սրտի, նրանց չհաջողվեց իրականացնել այն իրենց կենդանության օրոք: Չորս տարի առաջ միայն այդ մասնագիտությունը բացվեց Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մեխանիկայի եւ մեքենագիտության դեպարտամենտում:

Պրոֆեսորներ Թ. Խաչատրյանի եւ Օ. Սապոնջյանի ծննդյան 90-ամյակի կապակցությամբ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի

գիտատեխնիկական խորհրդի ընդլայնված նիստում տեղի ունեցան գիտական ընթերցումներ, որոնց նյութերը տեղ են գտել Տեղեկագրի այս համարում:

Տեղեկագրի խմբագրական կոլեգիան եւ պրոֆեսորներ Թորգոմ Խաչատրյանի եւ Օգսեն Սապոնջյանի բազմաթիվ աշակերտները խոր երախտագիտությամբ նշում են նրանց անգնահատելի ավանդը պինդ մարմնի մեխանիկայի զարգացման գործում:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԹՈՐԳՈՄ ԹՈՐՈՍԻ
(1908-1980)

Թ. Խաչատրյանը ծնվել է 1908 թվականին, Ղարսի նահանգի Շատրվան գյուղում, գաղթել է Արեւելյան Հայաստան, ապրել որբանոցում:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1928-ին ընդունվել է Երեւանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետը, որտեղ 1930-ին, ցուցաբերելով արտակարգ ընդունակություններ, դեռեւս ԲՈՒՀ-ը չավարտած, նշանակվել է տեսական մեխանիկայի եւ նյութերի դիմադրության ամբիոնի ասիստենտ:

1932-ին, ավարտելով Հայաստանի շինարարական ինստիտուտը, շարունակել է աշխատել որպես ասիստենտ, իսկ երկու տարի անց ընդունվել է Մոսկվայի ինժեներա-շինարարական ինստիտուտի ասպիրանտուրան: 1937-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Առաձգական հիմքի վրա դրված շրջանային հեծանի հաշվարկը» թեմայով:

1939 - ին նշանակվում է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեսական մեխանիկայի ամբիոնի վարիչ: Սկսվում է Մեծ Հայրենականը, որին իր մասնակցությունն է բերում նաեւ Թ. Խաչատրյանը, իսկ զորացրվելուց հետո նորից նշանակվում է ամբիոնի վարիչ, որտեղ եւ պաշտոնավարում է մինչեւ կյանքի վերջը:

Թ. Խաչատրյանը դոկտորական ատենախոսություն պաշտպանել է 1947 թ. - ին «Փոքր կորություն ունեցող գլանային թաղանթներ» թեմայով: Պրոֆեսորի կոչում նրան շնորհվել է 1948-ին:

Թ. Խաչատրյանի գիտական աշխատանքները վերաբերում են առաձգականության տեսության տարբեր բնագավառներին: Կորագիծ ձողերի, սալերի, թաղանթների տեսությանը նվիրված գիտական հետազոտությունների արդյունքները մեծ կիրառություն են գտել ճարտարագիտական զանազան կառույցների եւ կառուցվածքների նախագծման եւ հաշվարկման աշխատանքներում: Առանձնահատուկ տեղ են գրավում թաղանթների տեսությանը նվիրված աշխատանքները, որոնց արդյունքներն ամփոփված են «Ցածրանիստ գլանային թաղանթներ» մենագրության մեջ: Կյանքի վերջին

տասնամյակում նա զբաղվում էր էլեկտրադինամիկայի եւ շարժման կայունության մի շարք խնդիրների լուծմամբ:

1950-ական թ. սկզբներին Թ. Խաչատրյանը եղել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի հիդրոտեխնիկական ֆակուլտետի դեկան, իսկ 1954 - 1959 թ.թ. զբաղեցրել է ինստիտուտի ուսումնական, ապա գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնները:

ՍԱՊՈՆՋՅԱՆ ՕՀԱՆԵՆ ՄՈՒՐԱԴԻ (1908-1987)

Օ. Սապոնջյանը ծնվել է 1908-ին, Վանա լճի հյուսիսային ափին գտնվող Արճեշ քաղաքում, գաղթել է Արեւելյան Հայաստան, ապրել է որբանոցում, ավարտել միջնակարգ դպրոցը:

1928թ. Օ. Սապոնջյանն ընդունվում է Երեւանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետը եւ 1932թ. ավարտում շինարարական ինստիտուտի հիդրոտեխնիկական կառուցվածքների շինարարության բաժինը ստանալով ինժեներ-հիդրոշինարարի որակավորում:

Դեռեւս ուսանող, 1931-ից աշխատում է շինարարական ինստիտուտի տեսական մեխանիկայի ու նյութերի դիմադրության ամբիոնում, որպես ասիստենտ: 1936-ին ընդունվում է Մոսկվայի ինժեներա-շինարարական ինստիտուտի ասպիրանտուրան շինարարական մեխանիկա մասնագիտությամբ: Իսկ 1939-ին պաշտպանում թեկնածուական ատենախոսություն «Բարակ սալերի ծռման մի քանի խնդիրների լուծումը» թեմայով:

1939-ին նշանակվում է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի նյութերի դիմադրության ամբիոնի վարիչ եւ պաշտոնավարում մինչեւ կյանքի վերջը:

Օ. Սապոնջյանը տեխնիկական գիտությունների գիտական աստիճան ստանում է 1950թ.-ին, նույն թվականին շնորհվում է նաեւ պրոֆեսորի կոչում:

Օ. Սապոնջյանի աշխատությունները հիմնականում նվիրված են էլիպտական, կիսաէլիպտական, բազմանկյուն եւ կիսաշրջանային եզրագծերով բարակ սալերի ծռման դեպքում նրանց լարվածային-դեֆորմացիոն վիճակի ուսումնասիրությանը: Բարակ սալերի ծռման տեսությունում նա զարգացրել է կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների կիրառման սկզբունքները, առաջարկել է Սեն-Վենանի սկզբունքի ձեւակերպում տեղափոխությունների համար:

Օ. Սապոնջյանը 1960 թ. ընտրվել է ՀՍԱՍ թղթակից-անդամ: Եղել է Ակադեմիայի «Զեկուցումներ» հանդեսի խմբագրական խորհրդի նախագահ, տերմինաբանական կոմիտեի անդամ: 1975 թ. -ին լույս տեսավ նրա «Բարակ սալերի ծռումը» հիմնարար մենագրությունը: